

ԳՈՐԾԱԴԻՐ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՊԵՏՔ Ե ՎԵՐԱՅՆԵՔ ԵՐԿՐՈՒՄ ԵՂԱԾ ԱՐԳԵԼՔՆԵՐԸ, ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆՍ ՀՈԳ ՏԱՆԵՔ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»

Վրաստանի կառավարության հերթական նիստում, Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին հանրագումարեց 2021 թվականի բյուջետային տարվա արդյունքները, ներկայացրեց մակրոտնտեսական և ֆինանսական պարամետրերը, որոնք վավերացվել են անցյալ տարի, չնայած կորոնավիրուսի համավարակով պայմանավորված մարտահրավերների:



Ինչպես նշեց Իրակլի Դարիբաշվիլին, 2020 թվականի դեկտեմբերին ծրագրված 2021 թվականի բյուջեն ձեռնարկվեց համավարակային և տնտես-

ական բարդ պայմաններում: Հետևաբար, 2021-ին տնտեսության վերականգնման սպասումները նվազագույնն էին:

- Այն ժամանակ տնտեսական աճի կանխագծումը կազմեց 4,3 տոկոս, համախառն ներքին արտադրանքի կանխագծված գումարը կազմում էր 53,4 միլիարդ լարի: Կանխագծումների համաձայն, կառավարության պարտքը կազմում էր ՀՆԱ-ի 60 տոկոսից ավելին, իսկ ընդհանուր առմամբ բյուջետային պակասորդը գերազանցում էր ՀՆԱ-ի 7,6 տոկոսը,- հայտարարեց վարչապետը՝ հավելելով, որ անցյալ տարվա մեկնարկին վավերացվեց 11,5 տոկոսի տնտեսական անկում, թեև հաջորդ ամիսներին երկրի էկոնոմիկան

աստիճանաբար սկսեց ընթանալ վերելքի ուղիով

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՄԵԿԱՍՅԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՎՈՒՄԱՐՈՒՄ

ԻՐԱԿԼԻ ԿՈՒՐԱՆԻՉԵ. «ԿԱՌՎԱՐՈՂ ԹԻՄԸ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ Ե ԱԶԳԱՅԻՆ ՇԱՀԵՐԸ»

Հունվարի 16-ին լրացավ մեկ տարին, երբ «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան» կառավարող կուսակցության հիմնադիր Բիծինա Իվանիշվիլու հրաժարականին հաջորդեց Իրակլի Կորախիձեի նշանակումը կուսակցության նախագահի պաշտոնում:

Այդ կապակցությամբ, կուսակցության նախագահը սոցիալական ցանցում տարածել է հայտարարություն, որտեղ նշել է, որ անցած մեկ տարվա ընթացքում կուսակցությունը հասել է նշանակալի արդյունքների: «Ավարտվեց արհեստական քաղաքական ճգնա-

ժամը, համոզիչ հաղթեցինք տեղական ինքնակառավարման ընտրություններում և «Վրացական երազանքը»

է՛լ ավելի ամրացրեց օրինակա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)



ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԵՐԿՐՈՒ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՅՔՈՒՄ ՀՈՒՐԳ ՄԵՎ ՄԻԼԻՈՆ ՔԱՂԱՔԱՅԻ ԿՍՏԱՆԱ ԷԼԵԿՏՐԱԵՆԵՐԳԻԱՅԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՈՒՄ

Հունվարի 17-ին Վրաստանի կառավարության հերթական նիստում երկրի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին հայտարարեց, որ Վրաստանի կառավարությունը կրկին կսուբսիդավորի էլեկտրաէներգիայի վճարները բնակչության մի մասի համար:

Խոսքը վերաբերում է սոցիալապես անապահով քաղաքացիներին, ում սոցիալական միավորը 150 հազարից պակաս է: Սուբսիդավորման ծրագիրը կմեկնարկի հունվարից և կշարունակվի ողջ տարվա ընթացքում:

- Մեր որոշմամբ սուբսիդավորվելու է էլեկտրաէներգիայի ամսական վճարը բնակչության մի մասի՝ մոտ 1 միլիոն քաղաքացու համար: Դա վերաբերում է սոցիալապես անապահով ընտանիքներին, ում միավորները 150 հազար կամ քիչ են:

Սուբսիդավորման այս ծրագիրը գործում էր համաճարակի սկզբից, և այն տեւեց երկու տարի, սակայն սույն թվականի հունվար ամսին պետք է դադարեցվեր, և մենք որոշեցինք շարունակել այս

ծրագիրը,- ասաց Իրակլի Դարիբաշվիլին և հավելեց, որ այն հատկապես վերաբերում է թիրախային խմբերին, որոնց բնակչությունը կազմում է 150000 կամ պակաս, ինչը կազմում է մոտ մեկ միլիոն մարդ:

- Ինչպես գիտեք, համաճարակի սկսվելու օրվանից մենք ունեինք այս ծրագիրը, որը տեւեց երկու տարի: Սուբսիդավորման ծրագիրը դադարեցվել է հունվարին, և այժմ մենք որոշել ենք շարունակել այս ծրագիրը և սուբսիդավորել էլեկտրաէներգիայի ավելացումը բնակչության այն թիրախային խմբերին, որոնք առավել կարիքավոր են: Ծրագիրը կգործարկվի հունվարից՝ շարունակվելով ողջ տարվա ընթացքում,- ընդգծեց Իրակլի Դարիբաշվիլին:

(Խորագրի շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻՆ ԵՎ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ ԵՐԿԿՈՂՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐ



Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հեռախոսազրույց է ունեցել Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլու հետ: Զրուցակիցները շնորհավորանք-



ներ են փոխանակել Սուրբ Ծննդյան տոնի առիթով: Նիկոլ Փաշինյանը և Իրակլի Դարիբաշվիլին գոհունակություն են հայտնել հայ-վրացական հարաբերությունների զարգացման ուղղությամբ երկու երկրների կառավարությունների միջև առկա համագործակցությունից և քննարկել երկկողմ փոխգործակցությանը վերաբերող օրակարգային մի շարք հարցեր:

ՔՆՆԱԿՎԵԼ Ե ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱՓՈՒՄԱՆ ՄԻՆՉԵՎ 2050 ԹՎԱԿԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Հունվարի 18-ին, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի մասնակցությամբ, տեղի է ունեցել խորհրդակցություն, որի ընթացքում քննարկվել են Հայաստանի վերափոխման, մինչև 2050 թվականի ռազմավարության իրականացմանն ու հնարավոր վերափոխմանն առնչվող հարցեր:



Խոսվել է ռազմավարությամբ նախատեսվող ծրագրերի, նպատակների, մոտեցումների բաղադրման, վերափոխման, փաստաթղթով նախատեսվող միջոցառումների արդիականության գնահատման, նոր բովանդակության մշակման հարցերի շուրջ: Ներկայացվել են տարբեր առաջարկություններ ու դիտարկումներ:

Ամփոփելով խորհրդակցու-

թյունը՝ վարչապետը նշել է, որ վերոնշյալ ռազմավարությունն անհրաժեշտ է դիտարկել որպես ուղեցույց: Վերափոխման արդյունքում այն կառավարության համար պետք է դառնա կիրառական գործիք:

Գործադիրի ղեկավարը պատասխանատուներին հանձնարարել է հետեւողականորեն շարունակել աշխատանքները ռազմավարության բարելավման շուրջ:

COVID - 19

ԶՈՒՐԱԲ ԱԶԱՐԱՇՎԻԼԻ. «ՄԻ ՔԱՆԻ ՇԱԲԱԹԻՉ ԿՈՒՆԵՆԱՆՔ «Pfizer» ԵՎ «Merck» ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԴԵՂԱՄԻԶՈՅՆԵՐԸ»

Վրաստանի առողջապահության նախարար Զուրաբ Ազարաշվիլին նշել է, որ առողջապահական համակարգը լիովին մոբիլիզացված է՝ «Օմիկրոնի» աճին դիմակայելու և հիվանդներին համարժեք բուժում ցուցաբերելու համար:

- «Օմիկրոնի» դեպքերի եական աճի դեպքում մեր առողջապահական համակարգը պատրաստ է ցանկացած մարտահրավերի: Ունենք համապատասխան ղեղորայք տարբեր փուլերում վարակվածներին բուժելու համար:



(Շարունակությունը՝ 6-րդ էջում)

ԳՈՐԾԱԴԻՐ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՊԵՏՔ Ե ՎԵՐԱՅՆԵՆՔ ԵՐԿՐՈՒՄ ԵՂԱՏ ԱՐԳԵԼՔՆԵՐԸ, ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆՍ ՀՈԳ ՏԱՆԵՆՔ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Եւ արդեն մարտին վավերացվեց անմախաղեպ 44,8 տոկոսի տնտեսական աճ:

- Տասնմեկ ամսվա նախնական տվյալներով, 2021 թվականին վավերացվեց 10,7 տոկոսի տնտեսական աճ, ինչը 2,5 տոկոսով գերազանցում է կանխագծված ցուցանիշը: ընդգծեց Իրակլի Ղարիբաշվիլին:

Նրա խոսքով, տնտեսական աճի արդյունքում, նշանակալիորեն ավելացավ ՀՆԱ-ի նուսնահալ ճյուղերը եւ ծրագրված 53,4-ի փոխարեն ներկայումս կանխագծված 59,6 միլիարդ լարիի շեմը:

- Տնտեսական վերելքով է պայմանավորված այն, որ մենք կարողացանք նշանակալիորեն կարգավորել ֆինանսական պարանետրերը: Մասնավորապես, ներքին ՀՆԱ-ին վերաբերող, կառավարության պարտքը ծրագրված 60,1 տոկոսի դիմաց նվազեց մինչեւ 50 տոկոսը, իսկ ընդհանուր


բյուջետային պակասորդը նախորդ ծրագրված 7,6 տոկոսի համեմատ կազմեց ՀՆԱ-ի 6,1 տոկոսը: Հետեւաբար, կրկին ցանկանում եմ ընդգծել, որ 2021 թվականին մենք կարողացանք ապահովել տնտեսական երկնիչ աճ,- հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին եւ հավելեց, որ 2021 թվականի արդյունքները լուրջ նախադրյալներ են ստեղծում է՛լ ավելի հաջողակ առաջընթացի ապահովման համար: Դրա համար, ըստ վարչապետի, հարկ է վերացնել երկրում գործող ավելորդ արգելքները եւ առավել ուշադրություն եւ աջակցություն ցուցաբերել բնակչության նկատմամբ:

- Մենք հիմա շատ ավելի պետք է անենք, պետք է չհանձնատանա՞նք ձեռք բերածով: Ընդհակառակը, ինչպես գիտեք, անցյալ տարի շատ իրադարձություններ տեղի ունեցան, այդ թվում՝ ընտրություններ, բավական լարված քաղաքական իրավիճակ էր ստեղծվել:

Սակայն, չնայած այդ ամենին, ունեցանք բավական հաջող տնտեսական տարի: Թեպետ պետք է միտված լինենք է՛լ ավելի հաջող տարի ունենալուն: Դրա համար շատ ավելի ենք աշխատելու, որպեսզի կարողանանք բավարարել բնակչության պահանջները, առանձնապես այն խավերի կարիքները, ովքեր բոլորից շատ են զգում պետության աջակցության կարիքը: Մենք պետք է առավել ուշադրություն պետական սպասարկումների մատչելիությունը, պետք է բարելավենք, կատարելագործենք պետական սպասարկումները, գործարարությունը պետք է կարողանա գործել օպերատիվորեն եւ արդյունավետ: Դրա համար երկրում պետք է վերացվեն ավելորդ արգելքները եւ առավել ուշադրություն հատկացվի բնակչությանը: Հենց դա պետք է լինի մեր գլխավոր ուղեւորը,- նշեց Իրակլի Ղարիբաշվիլին:

Անդրադառնալով զբաղվածության թեմային, վարչապետն ասաց, որ ներկայումս աշխատանքներ են տարվում աշխատատեղերի ստեղծման ուղղությամբ:

- Գյուղատնտեսության նախարար Լեւան Դավիթաշվիլուն ղեկավարությամբ, խումբը ուղեւորվեց Եվրոպա, որտեղ ուսումնասիրեց առանձին երկրների այդ ուղղությամբ իրականացված միջոցառումները: Մենք պետք է փոխենք առկա սոցիալական քաղաքականությունը, բնակչությանն առաջարկենք նոր աշխատատեղեր եւ նվազեցնենք աղքատության մակարդակը: Ինչպես գիտեք, առաջիկա երեք տարիներին մեր երկրում ընտրություններ չեն լինի, հետեւաբար երկրում քաղաքական իրավիճակը նշանակալիորեն կայունացված է, եւ մենք պետք է կատարենք կոնկրետ գործեր, մտածենք միայն կոնկրետ արդյունքների մասին եւ առավել օգնենք բնակչությանը,- հայտարարեց Վրաստանի վարչապետը:



ՈՒԿՐԱԻՆԱ
ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱԳԱՀ ՊՅՈՏՐ ՊՈՐՈՇԵՆԿՈՆ ՆԵՐԿԱՅԱՑԵԼ Է ԴԱՏԱՐԱՆԻՆ

Ուկրաինայի նախկին նախագահ, «Եվրոպական համերաշխություն» կուսակցության առաջնորդ Պյոտր Պորոշենկոն, ով հունվարի 17-ին Վարշավայից ժամանել էր Ուկրաինա, Կիեւում ներկայացրեց է Պեչերյան շրջանային դատարան, որտեղ քննության է առնվելու պետական դավաճանության գործով նրա խափանման միջոցի ընտրության միջնորդությունը: Ուկրաինայի գլխավոր դատախազությունը դատարանին միջնորդել է Պորոշենկոյին ձերբակալել պետական դավաճանության գործով՝ մոտավորապես 37 միլիոն դոլար գրավի վճարման հնարավորությամբ:

Հիշեցնենք, որ 2021 թվականի դեկտեմբերի 17-ին Պորոշենկոն, որը կասկածյալ է պետական դավաճանության գործով, լքել է երկիրը եւ ուղեւորվել դիվանագիտական շրջագայության, որի ընթացքում այցել էին պլանավորվել թուրքիա եւ Լեհաստան: Ավելի ուշ նա խոստացել է հայրենիք վերադառնալ:

ՂԱԶԱԽՍԱՆ
ՀԱՊԿ-Ի ԽԱՂԱՂԱՊԱՅ ՌԵԺԵՐԸ ՎԵՐԱԴԱՐՁԱՆ ՀԱՅՐԵՆԻՔ

ՀԱՊԿ-ի խաղաղապահ ուժերը, որոնք Ղազախստանի քաղաքներում մասնակցում էին օրինական իշխանության դեմ ահաբեկչական սպառնալիքի վերացմանը, վերադարձան հայրենիք:

Հիշենք, որ Ղազախստանում բողոքի ակցիաներն սկսվել են 2022 թվականի առաջին օրերին ժամոզեն եւ Ակտաու քաղաքներում, որտեղ բնակիչները հանրահավաքների էին դուրս եկել վառելիքի բարձր գների դեմ: Երկու օր անց անկարգություններ են ծայր առել Ալմաթիում, որը հանրապետության հին մայրաքաղաքն է եւ խոշորագույն քաղաքը. այնտեղ սկսվել է թալան, զինյալները հարձակվել են պետական հիմնարկությունների վրա, զենք են վերցրել: Ի պատասխան իշխանություններն արտակարգ դրության ռեժիմ են սահմանել ամբողջ երկրում եւ հակաահաբեկչական գործողություն սկսել:

Նախագահ Թասիմ ժոնարտ Տոկաեւը հունվարի 5-ի առավոտյան ստորագրել է կառավարության հրաժարականի հրամանագիրը եւ հաղորդել, որ դիմել է ՀԱՊԿ-ի օգնությանը՝ «հաղթահարելու ահաբեկչական սպառնալիքը»: ՀԱՊԿ-ի հավաքական անվտանգության խորհուրդը որոշում է ընդունել հավաքական խաղաղապահ ուժեր ուղարկել Ղազախստան՝ երկրում իրադրությունը կարգավորելու նպատակով: Հունվարի 13-ին հայտարարվել է, որ ՀԱՊԿ-ի առաքելությունը հաջողությամբ է ավարտվել. խաղաղապահներն սկսել են Ղազախստանից տուն վերադառնալ:

ՀՈՒՆԱՍՏԱՆ
ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐ՝ ԹՈՒՐԹԻԱՅԻ ԴԵՍ

Հունվարի 18-ին Հունաստանի վարչապետ Կիրիակոս Միցոտակիսը հայտարարեց, որ իրենք կազմել են միջոցառումների ցանկը, որոնք կյանքի կկոչվեն, եթե թուրքիան ագրեսիվ դիրքորոշում որդեգրի Հարավային Կիպրոսի եւ Հունաստանի նկատմամբ:

- Մենք պետք է տեղյակ լինենք, որ Հունաստանի նկատմամբ թուրքիայի քաղաքականության մեջ հիմնարար փոփոխություն չկա: Մենք պատրաստել ենք մի շարք սահմանափակող միջոցներ, որոնք կարող են օգտագործվել, եթե թուրքիան կրկին ագրեսիվ դիրքորոշում որդեգրի Հունաստանի եւ Կիպրոսի դեմ,- ասել է Հունաստանի վարչապետը:

«ՄԵԿԱՄՅԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՈՒՄ

ԻՐԱԿԼԻ ԿՈՒՐԱՄԻՅԵ. «ԿԱՌԱՎԱՐՈՂ ԹԻՍԸ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ Է ԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԵՐԸ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

նությունը, երկիրն ունի արժանավոր վարչապետ, խորհրդարանի արժանավոր նախագահ, մայրաքաղաքի արժանավոր քաղաքապետ, եւ կառավարող թիմը միասնական է՝ ինչպես երբեք: Ար-

մատական ընդդիմությունը, որի ղեկավարն արժանի պատիժ է կրում, ծայրաստիճան թուլացել է եւ չունի հնարավորություն սպառնալիք ստեղծելու պետական կայունությանը: Կառավարող թիմը պաշտպանում է ազգային շահերը, պետական եւ խորհրդարանական անկա-

խությունը, կառավարությունն ապահովում է տնտեսության երկնիչ աճը:

Ուրախ եմ, որ վերոնշյալ արդյունքների հաստատման գործում որպես կառավարող թիմի կուսակցության նախագահ, իմ ավանդն են ներդրել,- նշված է Իրակլի Կոբախիձեի գրառման մեջ:

ՆԱԽԱՋԵՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵԱ ԾՈՒՈՒԿԻԱՆԻ. «ԼԻԱՅՈՒՅՍ ԵՄ, ԸՆԹԱՑԻԿ ՏԱՐԻՆ ԹՈՒՅԼ ԿՏԱ ՏՈՆԵԼ «ՎՐԱՍԱՆ» ԹԵՐԹԻ 100-ԱՄՅԱ ՀՈՐԵԼՅԱՆԸ»

ՎՐԱՍԱՆԻ ՓՈԽՎԱՐՉԱԳԵՏ, ՄՇԱԿՈՒՅԹԻ, ՄՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐՈՎ ՆԱԽԱՐԱՐԸ ՀԱՆԳԻՊԵՅ «ՎՐԱՍԱՆ» ԹԵՐԹԻ ՂԻՄԱՎՈՐ ԽՄԲԱԳՐԻ ՇԵՏ



Հունվարի 17-ին Վրաստանի փոխվարչապետ, Մշակույթի, սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարար Թեա Ծուլուկիանին իր նստավայրում հանդիպել եւ զրուցել է «Վրաստան» թերթի գլխավոր խմբագիր Վան Բայրուրյանի հետ:

Հանդիպմանը Թեա Ծուլուկիանին «Վրաստան» թերթի գլխավոր խմբագրին, խմբագրության աշխատակիցներին եւ ընթերցողներին շնորհավորել է Ամանորի եւ Սուրբ Ծննդյան առիթով, եւ մեկ անգամ եւս ընդգծել թերթի նշանակությունն ու խոսել անցած տարի նշվող հորեյանական տարեթվի կարեւորության մասին:

Նոր ու անխափան հարյուրամյակ մաղթելով Վրաստանի հայության պարբերականին ու նաեւ վրաց-հայկական բարեկամական փոխհարաբերությունների մերօրյա խորհրդանիշներից մեկին, Թեա Ծուլուկիանին ցավով նշել է, որ համավարակով պայմանավորված անկայուն իրավիճակն ու պարբերական եւ անկանխատեսելի սահմանափակումները թույլ չեն տվել նախատեսվածի համա-

ձայն թերթի հորեյանը նշել հանդիսավոր պայմաններում եւ ըստ արժանվույն: Եվ սակայն, հույս է հայտնել ու նաեւ լավատեսություն, որ վարակի դեմ ընթացիկ տարվա գործողությունները հնարավորություն կտան վերջ դնել համավարակին, վերադառնալ բնակչուն կյանք, լրացնել բացթողումներն ու պատշաճ մակարդակով տոնել թերթի 100-ամյա հորեյանը:

Թեա Ծուլուկիանին իր երախտիքն է հայտնել Վան Բայրուրյանին, խմբագրության աշխատակիցներին, համավարակի պայմաններում թերթի եւ ոչ մի համար բաց չթողնելու, այն անխափան թողարկելու, Վրաստանի հայությանը ժամանակին հասցնելու համար, շեշտելով, որ թերթը ոչ միայն վիրահայության, այլեւ բազմազգ Վրաստանի հարստություններից ու արժեքներից է, իսկ նրա գոյությունն ու հետագա ընթացքը՝ կարեւոր նախապայմաններից մեկը:

ԿՐՈՆԱԿԱՆ

ՎԵՍՏԻ ՄԱՍՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՅՈՒՄ՝ ՎՐԱՍԱՆԻ ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

ՎՐԱՍԱՆԻ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒՆ ԿՏՐԱՍԱԴՐԿԻ 600 ՀԱԶԱՐ ԼԱՐԻ

Կրոնական գործերի պետական գործակալությունը, որին հանձնարարվել էր գումարը բաշխել կառավարության համապատասխան որոշման համաձայն, տարածել է հայտարարություն, ըստ որի՝ Վրաստանում կրոնական համայնքներին միջոցներ են հատկացվել խորհրդային տոտալիտար ռեժիմի ժամանակ պատճառված վնասի մասնակի փոխհատուցման համար:

Գործակալության հաղորդմամբ՝ 2022 թվականի պետությունը սահմանված 4 500 000 լարիից այս փուլում բաշխվել է 3 500 000 լարի:

«2022 թվականի հունվարի 12-ին Կրոնական հարցերի պետական գործակալությունը հանձնարարական է ուղարկել վարչապետին եւ համաձայն Վրաստանի կառավարության թիվ 117

որոշման 4-րդ հոդվածի 2-րդ կետի (27.01.2014 թ.) գործակալությանը հանձնարարվել է Վրաստանում խորհրդային տոտալիտար ռեժիմի ժամանակ մասնակի փոխհատուցման համար հատկացված գումարը բաշխել եւ 2022 թվականի պետությունը նշված 4 500 000 (չորս միլիոն հինգ հարյուր հազար) լարիից այս փուլում 3 500 000 (երեք մի-

լիոն հինգ հարյուր հազար) լարի բաշխվել է հետեւյալ չափով.

Վրաստանի իսլամական համայնք - 2 200 000 լարի (երկու միլիոն երկու հարյուր հազար), Վրաստանի Հայ Առաքելական քրիստոնյա համայնք - 600 000 (վեց հարյուր հազար) լարի, Վրաստանի հռոմեական կաթոլիկների քրիստոնեական համայնք - 400 000 (չորս հարյուր հազար) լարի, Վրաստանի հրեական համայնք - 300 000 (երեք հարյուր հազար) լարի, մնացած 1 000 000 (մեկ միլիոն) լարին կբաշխվի ավելի ուշ,- ասվում է Կրոնական հարցերի պետական գործակալության հաղորդագրության մեջ:

Շարաքից շարաք. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԷԿՈՆՈՄԻԿԱ

ՎՐԱՍԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՀԱՆԴԻՊԵՃ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՆԵՐԻ ՀԵՏ

Հունվարի 17-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին հանդիպում ունեցավ տարածաշրջաններում պետական լիազոր-նահանգապետերի հետ: Հանդիպմանը վարչապետը նահանգապետերի հետ քննարկեց տարածաշրջաններում ընթացիկ եւ ծրագրված նախագծերը, ընդգծեց համապատասխան աշխատանքները կարճ ժամկետներում իրականացնելու անհրաժեշտությունը:

Հանդիպմանը վարչապետը նշեց, որ կառավարության համար առաջնակարգ է ուշադրությունը բեռնվառի բնակչության համար առաջնահերթային համարվող նախագծերի իրականացման վրա, եւ այդ գործընթացում նշանակալից է տարածաշրջանների պետլիազորների դերը: Կառավարության գրասենյակում կայացած հանդիպմանը քննարկվեցին յուրաքանչյուր տարածաշրջանի համար ծրագրված նախագծերի մանրամասները, այդ թվում՝ վարչապետի նախաձեռնած «Նորացված տարածաշրջաններ» ծրագրի շրջանակներում իրականացվող աշխատանքները: Քննարկվեցին նաեւ իրատեսակ հարցեր, մասնավորապես առան-

ձին մունիցիպալիտետների համար ջրամատակարարման, ինչպես նաեւ ճանապարհների կարգավորման հարցերը: Ընդգծվեց, որ կենտրոնական եւ տեղական իշխանություններն առավելագույն համակարգված գործունեություն են ծավալելու, որպեսզի նպաստեն նշանակալի ու առաջնահերթային հարցերի արագ եւ արդյունավետ կարգավորմանը:

Իրակլի Դարիբաշվիլին պետլիազորներին կոչ արեց հաղորդակցվել տեղի բնակչության հետ, որպեսզի ապահովվի տարածաշրջանի բնակչության պահանջների կարգավորումը:



ՎՐԱՑ ՈՒՂՂՈՒՄԻ ԵԿԵՂԵՑԻՆ ՆՇԵՑ ԱՍՏՎԱԾԱՅՆՆՈՒԹՅԱՆ ՏՈՒՆԸ

Հունվարի 19-ին Վրաց Ուղղափառ եկեղեցին նշեց Աստվածահայտնության տոնը: Վրաստանի բոլոր ուղղափառ եկեղեցիներում անցկացվեց Սուրբ պատարագ:

Թբիլիսիի Սուրբ Երրորդության տաճարում տոնական պատարագը մատուցեց Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդը: Տոնական պատարագին ներկա էին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին, Վրաստանի խորհրդարանի նախագահ Շավլա Պապուաշվիլին, պատգամավորներ, կառավարության անդամներ:

Մինչ պատարագի ավարտը Սուրբ Երրորդության տաճարի բակում անցկացվեց ջրօրհնների արարողություն:

Աստվածահայտնության եւ մկրտության տոնը Քրիստոնեական տասներկու տաղավար տոներին է:

ԷԼԵԿՏՐԱԵՆԵՐԳԻԱՅԻ ՄՊԱՌՈՂԱԿԱՆ ՍԱԿԱԳԻՆԸ ԱՆՓՈՓՈՒ Է

Վրաստանի էներգետիկայի եւ ջրամատակարարումը կարգավորող ազգային հանձնաժողովը (Սեմեկ) 56-րդ հանրային միստում քննարկել է օրակարգային հարցեր, այդ թվում՝ էլեկտրաէներգիայի սակագները: Ըստ այդմ, սակագները մնացել են անփոփոխ էլեկտրաէներգիա մատակարարող «Էպ Ջորջիա մատակարարման» եւ «Tbilisi Electricity Supply Company» (Telmiko) համար:

ՆԵՐԿԵԼ Է ԿՈՍՏՈՒՆԱԼ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԱՐԱԳ ԱՏՈՒՄԱՆ ՀԱՆՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Վրաստանի քաղաքացիներն այսուհետ կարող են հեշտությամբ, հաղորդագրության միջոցով տեղեկանալ կոմունալ վճարների մասին՝ մուտքագրելով հատուկ ծածկագիրը: Վրաստանի ազգային էներգիայի եւ ջրի կարգավորման ազգային հանձնաժողովը (GNERC) հայտնում է, որ մուտքագրելով *303 # եւ հետեւելով հրահանգներին՝ արագ եւ անվճար հնարավոր է ստուգել էլեկտրաէներգիայի, գազի կամ ջրի կոմունալ վճարները:

Այս USSD ծածկագիրը կարող են օգտագործել Magticom, Silknet եւ Beeline քցային օպերատորների բաժանորդները:

ՆԱԹԻԱ ԹՈՒՐՆԱԿԱ. «ՎՐԱՅԱԿԱՆ ԱՐՏԱՊՐԱՆՔԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ ԵՐԿՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԵՎ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՐԺԻՉ ՈՒԾՆ Է՛»

Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Նաթիա Թուրնավան, մեկնաբանելով վիճակագրական ծառայության՝ էկոնոմիկայի առանձին ոլորտները բնութագրող տվյալները, հայտարարեց, որ ինչպես եւ ակնկալում էին, 2021 թվականին նկատվեց վերականգնման բավական դրական միտում. ավելացավ ինչպես արտաքին առևտրաշրջանառությունը, այնպես էլ՝ ապրանքների արտահանումը: Արտահանման ծավալները գերազանցել են 4,2 միլիարդ դոլարը՝ ամենաբարձրը վերջին տասնամյակում, իսկ 2020 թվականի համեմատ՝ աճը կազմել է մոտ 27 տոկոս:

2021 թվականին արտահանումը կազմել է 4 242,3 մլն դոլար, իսկ ներմուծումը, նախորդ տարվա համեմատ, աճել է 25,1 տոկոսով եւ կազմել 10,077 մլն ԱՄՆ դոլար: 2021 թվականին արտահանումը 11,7 տոկոսով ավելի է, քան 2019 թվականին (մինչ համաճարակը): 2021 թվականին ապրանքաշրջանառությունն աճել է 25,6 տոկոսով եւ կազմել 14 319,3 մլն դոլար, ինչը 7,5 տոկոսով ավելի է 2019 թվականի ցուցանիշից:

300 ՄԻԼԻՈՆ ԴՈԼԱՐ՝ ՕՏԱՐԵԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ

Ազգային վիճակագրական ծառայության նախնական տվյալներով՝ Վրաստանում օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալը 2021 թվականի երրորդ եռամսյակում կազմել է 299,0 մլն ԱՄՆ դոլար, ինչը 1,4 տոկոսով գերազանցում է 2020 թվականի երրորդ եռամսյակի ճշգրտված տվյալները:

Ըստ վիճակագրության ծառայության, աճը հիմնականում պայմանավորված է վերաներդրումների տոկոսադրույթի աճով: Միեւնույն ժամանակ, ըստ գերատեսչության, այս տարվա երրորդ եռամսյակում, ըստ Վրաստանում օտարերկրյա ուղղակի ներդրումների, երկրների շարքում ամենամեծ ներդրողն առաջին տեղում Միացյալ Թագավորությունն է՝ 60,9 մլն ԱՄՆ դոլարով, որը կազմում է ընդհանուր օտարերկրյա ուղղակի ներդրումների 20,4 տոկոսը, երկրորդ տեղում Նիդերլանդներն է՝ 59,8 մլն դոլար (20,0 տոկոս), իսկ երրորդը Չեխիան՝ 36,0 մլն ԱՄՆ

դոլարով (12,0 տոկոս): Վիճակագրության ծառայության տվյալներով՝ 2021 թվականի երրորդ եռամսյակում ամենամեծ օտարերկրյա ուղղակի ներդրումներն իրականացվել են ֆինանսական հատվածում եւ կազմել 87,1 մլն դոլար, որը կազմում է ընդհանուր օտարերկրյա ուղղակի ներդրումների 29,1 տոկոսը: Երկրորդ տեղում էներգետիկ ոլորտն է՝ 69,3 մլն ԱՄՆ դոլար (23,2 տոկոս), իսկ երրորդը՝ մշակող ոլորտը՝ 54,8 մլն ԱՄՆ դոլարով (18,3 տոկոս):

1,2 ՄԻԼԻԱՐԴ ԴՈԼԱՐ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆԻՑ

Վրաստանի զբոսաշրջության ազգային գործակալության (GNTA) տեղեկատվությամբ, 2021 թվականը Վրաստանում նշանավորվեց զբոսաշրջության վերականգնման արագ տեմպերով ինչպես եկամուտների, այնպես էլ՝ ճանապարհորդության տեսանկյունից՝ միջազգային ճանապարհորդություններից Վրաստանը 2021 թվականին ստացել է 1,244,941,717 դոլար եկամուտ:

2021 թվականին Վրաստան կատարվել է 1 577 463 միջազգային զբոսաշրջային այցելություն: 2019 թվականի տվյալների համեմատ, ճանապարհորդությունների 31 տոկոսը վերականգնվել է: 2020 թվականի համեմատ աճը կազմում է 45,1 տոկոս:

«2021 թվականին միջազգային ճանապարհորդությունների մեծ մասը տեղի է ունեցել օդային ճանապարհով: Մասնավորապես, երկիր այցելությունների 51%-ը կատարվել է Վրաստանի օդանավակայաններով»,- նշում է զբոսաշրջության վարչությունը:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ

ԻՐԱՎԼԻ ԿՈՒՐԱՏԻՉԵ. «ԱՐԴԵՆ ՎԱՐՏՆԻՔ ԳԷ, ՈՐ «ԱՉԳԱՅԻՆ ՀԱՐԺՈՒՄԸ» ԵՎ ՎԱՆԱՐԻԱՅԻ ԿՈՒՍԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՆԵՅՎԱԾ ՊԱՅՔԱՐՈՒՄ ԵՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՄ»

Հունվարի 20-ին Ծալենջիխայի մունիցիպալիտետի սակրեբուլյոյում «Ազգային շարժման» կուսակցությունից սակրեբուլոյի 11, «Հանուն Վրաստանի» կուսակցության երեք անդամների աջակցությամբ նախկին վարչապետ Գիորգի Գախարիայի «Հանուն Վրաստանի» կուսակցության անդամ Կոռնելի Սալիխյան սակրեբուլոյի նախագահ ընտրելը, «Վրացական երազանք» կուսակցության նախագահ, խորհրդարանական մեծամասնության ղեկավար Իրակլի Կոբախիձեն մեկնաբանել է որպես ակնհայտ փաստ՝ «Ազգային շարժման» եւ Գախարիայի կուսակցության կողմից:

Նրա խոսքով, «Ազգային շարժման» եւ Գախարիայի կուսակցության միջեւ կոալիցիա է ստեղծվել երկու մունիցիպալիտետներում, առաջինը՝ Չխորոժոլու, երկրորդը՝ Ծալենջիխա:

- Այս ամենը վկայում է այն, ինչ ասում էինք քաղաքապետարանի ընտրություններից առաջ, նրանց միջեւ իրական դաշինք է ձևավորվել,

ինչը կոալիցիայի տեսքով ձևավորվում է կոնկրետ համայնքներում: Այն, որ «Ազգային շարժում» եւ Գախարիայի կուսակցությունը միմյանց հետ կոալիցիայի մեջ են, այլևս ոչ մեկի համար գաղտնիք չէ, նրանք արդեն բացահայտ խոսում են եւ համապատասխան որոշումներ կայացնում,- ասաց Իրակլի Կոբախիձեն:

Նշենք, որ Ծալենջիխայի մունիցիպալիտետի սակրեբուլյոյում Կոռնելի Սալիխյան կողմ է քվեարկել 14 պատգամավոր: «Վրացական երազանք» խմբակցության անդամները չեն մասնակցել ընտրություններին: Ընտրություններից հետո նրանք ի նշան բողոքի լքել են միստը:



էջը պատրաստեց ՅՈՒՐԻ ՊՐՈՄՅԱԼԸ

ԳԻՐԳԻ ՎՈԼՍԿԻ. «ԱՎՆՀԱՅՏ Է, ՈՐ ՓՈՐՁՈՒՄ ԵՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ՍԱԿԱՇՎԻԼՈՒ ԾՐԱԳՐԵՐԸ»

Ակնհայտ է, որ ներկայումս լուրջ արշավ է կազմակերպվում Սաակաշվիլու կողմից մշակված ծրագրի իրականացման ուղղությամբ:

Այդ մասին հայտարարեց Վրաստանի խորհրդարանի առաջին փոխխոսնակ Գիորգի Վոլսկին, մեկնաբանելով երրորդ նախագահի կողմից բարձրաձայնաձայն եւ «Ազգային շարժման» կողմից իրականացվող ծրագիրը, ըստ որի՝ քայլեր են իրականացվելու դատական իշխանության քաղաքականացման, «Ազգային շարժմանը» հակադրվող դավաճանության կողմից:



Վոլսկիի սեւ ցուցակի կազմման ուղղությամբ: Նրա խոսքով, այդ արշավի ղեկավարներից մեկը ներքին գործերի նախարարության նախկին բարձրաստիճան պաշտոնյայի կինն է: Ըստ Վոլսկու, մշտական աշխատանք է տարվում, որպեսզի ինչ-որ կերպ դատարաններում համակարգը քաղաքականացվի: Սեւ ցուցակ-

ների կազմում եւ այդ ցուցակներում «Ազգային շարժման» համար անընդունելի դատավորների ընդգրկումը եւս մեկ վկայություն է նրա, որ քայլեր են իրականացվում առանձին դատավորների վարկաբեկման ուղղությամբ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ԿՆԵՐԿՐՎԵՆ ԲԱՐՁՐՈՐԱԿ ԴԵՂԱՄԻՋՈՅՆԵՐ, ՈՐՈՆՅՑ ԳՆԵՐԸ ԿԼԻՆԵՆ ՇԱՏ ԱՎԵԼԻ ԷԺԱՆ»

Յունվարի 17-ի կառավարության նիստում, Վրաստանի վարչապետ Իրակլի Գաբրիաշվիլին անդրադարձավ գործադիր իշանության կողմից բազմիցս բարձրացված, դեղագործական շուկայում գնազույցման, դեղերի ներկրվածների նկատմամբ վերահսկողության սահմանման քննարկին և նշեց, որ կառավարությունը, բնակչությանը տված խոստման համաձայն, կոնկրետ քայլեր է ձեռնարկել դեղագործական շուկայում իրավիճակի կարգավորման, դեղերի գների նկատմամբ վերահսկողության հաստատման ուղղությամբ:



Նրա խոսքով, թուրքական շուկան արդեն բացվել է, և Թուրքիայից կներկրվեն GMP ստանդարտներին համապատասխան բարձրորակ դեղամիջոցներ, որոնք կլինեն շատ ավելի էժան և գների տարբերությունը կլինի զգալի:

Ինչպես խոստացել էինք, այսօր ստորագրեցինք կառավարության որոշումը: Ըստ այդմ, թուրքական շուկան արդեն բացվել է, և Թուրքիայից կներկրվեն բարձրորակ, GMP ստանդարտի դեղամիջոցներ: Ինչպես գիտեք, ես բացահայտ խոսել եմ այս մասին: Գների տարբերությունը նկատելիորեն մեծ է: Մեզ մոտ ամենապահանջված դեղերն արժեն 10 լարի պայմանական, Թուրքիայում՝ մեկ լարի, երկու լարի: Յետեւաբար, որեւէ փաստարկ չկա, թե ինչու պետք է չբացվեր թուրքական շուկան, ես դա չեմ լսել: Ուստի մենք որոշեցինք բացել թուրքական շուկան: Այն ուժի մեջ է մտել այսօր, և հուսով եմ, որ ներկրող ընկերությունները Թուրքիայից կներկրեն բարձրորակ դեղամիջոցներ, ինչը զգալիորեն կնվազեցնի դեղերի գները Վրաստանում: Կայտարարեց Իրակլի Գաբրիաշվիլին՝ հավելելով, որ մրցակցության գործակալությունը ավարտել է դեղագործական շուկայի ուսումնասիրման աշխատանքները և համապատասխան առաջարկություններ է ուղարկել թե՛ կառավարությանը, թե՛ խորհրդարանին:

Մրցակցության գործակալությունը, ինչպես խոստացել էր, ավարտել է դեղագործական շուկայի ուսումնասիրման աշխատանքները: Դիտարկված, համապատասխան հանձնարարականներն արդեն ուղարկվել են խորհրդարան, կառավարություն: Յիմա կխնդրեմ առողջապահության նախարարին աշխատանքային խումբ ստեղծել, խնդրել խորհրդարանի համապատասխան հանձնաժողովի ներկայացուցիչներին, որ միասին սկսեն աշխատել, քանի որ մի շարք օրենքներ պետք է փոխվեն, և մենք ակնկալում ենք, որ դա կօգնի ավելի շատ, ավելի էժան դեղամիջոցներ ներկրել: Ամենակարեւորը՝ մեր խնդիրը պետք է լինի մի կողմից դեղերի գների մոնիտորինգը, ոչ թե այս փուլում կանոնակարգելը, մյուս կողմից՝ անհրաժեշտ որակը վերահսկելը: Մեր բնակչությանը պետք է որակյալ դեղեր տրամադրվեն, սա մեր թիվ մեկ պահանջն է: Այժմ մենք կսկսենք ակտիվ աշխատել: Պարոն նախարար, Ազարաշվիլին կսկսի աշխատել այս թեմայով, և մենք արդյունքներ կունենանք առաջիկա մի քանի շաբաթների ընթացքում, ընդօժեց Իրակլի Գաբրիաշվիլին:

500 ԼԱՐԻ ԿԱՌՈՋԵՐ՝ ԹԲԻԼԻՍԻ ԱՆԱՊԱՐՈՎ ԹՈՇԱԿԱՌՈՒՆԵՐԻՆ

Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեի հայտարարությամբ, հունվարի 11-ին մեկնարկեց այս տարվա սոցիալական առաջին ծրագրերից մեկը՝ 500 լարիանոց վաուչերներով Թբիլիսիի անապահով թոշակառուների ապահովումը դեղորայք գնելու համար:

Թբիլիսիի քաղաքապետը հիշեցրեց, որ ինքը այս ծրագրի մասին խոսել էր դեռ եւս ամացալ տարվա հոկտեմբերին, նշելով, որ մայրաքաղաքի շուրջ 40 հազար անապահով կենսաթոշակառուներ կկարողանան օգտվել այդ ծրագրից, որի ընդհանուր բյուջեն սահմանված է 10 միլիոն լարիի չափով:



Կախա Կալաձեի խոսքով սոցիալապես անապահով ընտանիքների տվյալների բազայի համաձայն, այս ծրագրի շահառուները կլինեն Թբիլիսիում գրանցված կենսաթոշակային տարիքի անձինք, որոնց սոցիալական վարկանիշային միավորը չի գերազանցում 200 հազարը:

Դեղերի ցանկը եւ քանակը, դրանից հետո շահառու կան նրա ներկայացուցիչն իր նշած հեռախոսահամարին Թբիլիսիի քաղաքապետարանից SMS-ի միջոցով կստանա հատուկ կոդ, շահառուն կամ ներկայացուցիչը դեղը ստանալու համար դիմում է իր նախընտրած դեղատեսակին՝ ստացված ծածկագրով եւ ID քարտով:

Այս մարդկանց աջակցությունն ու օգնությունը սկզբունքորեն կարելի է, և մենք ամեն ինչ անելու ենք նրանց կողքին լինելու եւ հնարավորինս աջակցելու համար: Քաղաքացին վաուչեր ստանալու համար քաղաքապետարան կամ թաղապետարան գալու կարիք չի ունենա, և չափանիշները բավարարելու արժեքն ու ավտոմատ կերպով կդառնա ծրագրի օգտատեր, ընդ որում Կախա Կալաձեի հավելելով, որ վաուչերն օգտագործելու համար, ծրագրի շահառուն կամ նրա ներկայացուցիչը խորհրդակցում է բժշկի հետ՝ որոշելու անհրաժեշտ դեղորայքը, բժիշկը ծրագրի էլեկտրոնային մոդուլում կտեղադրի հիվանդի առողջական վիճակի մասին գրություն, որտեղ նշված կլինի անհրաժեշտ

Թե՛ առողջական վկայագրում թվարկված բոլոր դեղամիջոցներն ամբողջությամբ հասանելի չեն շահառուի կողմից ընտրված դեղատեսակը, ապա շահառուն կարող է մնացած դեղերը վերցնել մեկ այլ դեղատեսակ կամ ավելի ուշ՝ նույն դեղատեսակը, շահառուն կամ նրա ներկայացուցիչը պետք է դեղը վերցնի դեղատեսակի ծածկագրով ստանալուց ոչ ուշ, քան 30 օրը:

Քաղաքապետի խոսքով, Թբիլիսիի քաղաքապետարանի Առողջապահության եւ սոցիալական ծառայությունների քաղաքային ծառայությունն արդեն համապատասխան դասընթացներ է անցկացրել բուժիտներին և դեղատեսակի ցանցերի ներկայացուցիչների համար՝ ծրագրի մեկնարկի եւ իրականացման վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու նպատակով, որպեսզի թոշակառուները կարողանան անարգել ծառայություններ ստանալ:

ՄԻՆՉԵՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 1-Ը ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՆԱՊԱՐՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՎԻՃԱԿԻ ՍՏՈՒԳՈՒՄԸ ԿԱՍԵՑՎԵԼ Է

Վրաստանի բռնազաղթվածների, աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարարության տեղեկատվությամբ, սոցիալապես անապահով ընտանիքների տվյալների բազայում հաշվառված ընտանիքների սոցիալ-տնտեսական վիճակի վերստուգումը կասեցվել է մինչև 2022 թվականի ապրիլի 1-ը:

Ըստ նախարարության տվյալների՝ COVID-19 համաճարակի ժամանակ սոցիալական պաշտպանության ոլորտում ներդրվել են սոցիալական աջակցության վարչարարության ժամանակավոր միջոցառումներ՝ համաձայն Վրաստանի կառավարության որոշման, որով սոցիալական աջակցություն չի իրականացվում գրանցված ընտանիքների համար:

Ստացող ընտանիքների սոցիալ-տնտեսական վիճակը դեռևս չի ստուգվի, եթե ընտանիքը չպահանջի:

Չնայած ռեյտինգային միավորների չափին կենսապահովման նպաստ ստացող ընտանիքներին շարունակել են օգնություն ցուցաբերել: Փոփոխության համաձայն կենսապահովման հոլման նպաստ

«Սոցիալական ծառայությունների գործակալությունը բնակչությանն ապահովում է սոցիալական ծառայությունների անխափան մատուցում: Այդ նպատակով շարունակվում են աշխատանքները սոցիալական ծառայությունների գործակալության կողմից մատուցվող ծառայությունների որակի բարելավման ուղղությամբ ինչպես կազմակերպչական, այնպես էլ՝ կառուցվածքային փոփոխությունների առումով»,- նշված է հաղորդագրության մեջ:

ԻՐԱԿԼԻ ԼԵՔՎԻՆԻՉԵ. «ԴԵՂԻ ՃԱՇՐ ԳԻՆԸ՝ ԱՆՈՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՓԱՆԻՆ ԶԵՆ»

Ինչպես հայտարարեց Մրցակցային գործակալության նախագահ Իրակլի Լեքվինաձեն, դեղերի գները կարգավորելու նպատակով օրենսդրական փոփոխությունների վրա կաշխատեն հնարավորինս արագ:



Յետագոտության մեջ մենք խոսում ենք այն մասին, որ ունենք շուկայում խմբային գերակայության, հոլդինգային կառույցների տվյալները: Այսօրվա իրավիճակում, երբ որոշակի վերահսկողական մեխանիզմներ չկան շուկայում, հոլդինգային կառույցներն ավելի շատ կոնտրոլում են հետապնդում, քան քաղաքացու համար լավագույն ընտրությունը կատարելու հնարավորությունը: Սա նշանակում է, որ դեղը, որը նրանք ներմուծում կամ արտադրում են, մեծ աջակցություն է ստանում իրենց սեփական կլինիկայում կամ դեղագործական ցանցում վաճառքի ժամանակ: Նման կառույցներն ունեն ավելի քան 50 տոկոս մասնաբաժին սեփական դեղերի վաճառքում, հայտարարեց Իրակլի Լեքվինաձեն և հավելեց, որ կանոնակարգերի ուժի մեջ մտնելուց հետո, իրենց հաշվարկներով, բնակչության ծախսերը դեղերի միայն մեկ խմբի վրա կկրճատվեն 25 տոկոսով, որը, ընդհանուր առմամբ, կգերազանցի 250 միլիոն լարին:

Ինչպես նշվեց կներկրվեն GMP ստանդարտի դեղամիջոցներ: Մեր գործակալությունը, համապատասխան գերատեսչությունների հետ մշակել ենք որակի վերահսկողության բավական խիստ մեխանիզմներ, ինչը թույլ կտա դեղագործական ներքին շուկան ապահովել բարձրորակ, միաժամանակ էժան դեղամիջոցներով: Էժան, չի նշանակում անորակ, ընդօժեց Իրակլի Լեքվինաձեն:

Անդրադառնալով ներկրվող, համեմատաբար էժան դեղերի թեմային, Մրցակցային գործակալության նախագահը նշեց, որ էժան, չի նշանակում անորակ:

ՎՐԱՍԱՆՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂՆԵՐԻ ԹԻՎԸ ԱՎԵԼԱՑԵԼ Է՝ ՉԱՍՆԵԼՈՎ 643 167

Սոցիալական ծառայությունների գործակալության կայքում հրապարակված վիճակագրության համաձայն՝ 2021 թվականի դեկտեմբերին պետության կողմից աջակցություն է ստացել 643 167 մարդ, ինչը՝ 118 569-ով ավելի է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, 2020 թվականի դեկտեմբերին պետական օգնության կարիք ուներ 524 598 մարդ:

Նշենք նաև, որ մեկ տարում կենսապահովման նպաստ ստացողների թիվն աճել է 22,6 տոկոսով: Մայրաքաղաք Թբիլիսիում նպաստ է ստանում 130 748 մարդ, որը կազմում է նպաստ ստացողների ընդհանուր թվի 20,3 տոկոսը: Երկրորդ տեղում Իմերեթին է՝ 13 տոկոս, այս շրջանում աջակցություն է ստանում 83 563 մարդ: Առաջատար եռյակում է Քվեմո Քարթլին, որտեղ պետական օգնություն է ստանում կենսապահովման նպաստ ստացողների ընդհանուր թվի 12 տոկոսը, ընդհանուր առմամբ՝ 77 681 մարդ:

սոցիալական օգնություն ստացողների թիվն առանձնակի ավելացել է Սամցխե-Ջավախեթիում, Աջարիայի Ինքնավար Յանթարությունում և Քվեմո Քարթլիում: Սամցխե-Ջավախեթիում անցյալ տարվա դեկտեմբերին գրանցվել է 19 393 սոցիալապես անապահով անձ, իսկ 2020 թվականի դեկտեմբերին՝ 13 613: Աճը կազմել է 42,4 տոկոս, Քվեմո Քարթլիում՝ 2021 թվականի դեկտեմբերին կենսապահովման նպաստ ստացողների թիվը սահմանվել է 77 681՝ 2020 թվականի նույն ժամանակահատվածի 60 496-ի փոխարեն: Աճը կազմել է 28, տոկոս:

Էջը պատրաստեց ՅՈՒՐԻ ԿՈՐԵՆՅԱԼԸ